ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ-280-12.09.2019-ԱՍ-011/0 *ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-258-Ն օրենքի (այսուհետեւ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. «ժ)» կետում «արտադրանքի թողարկման» բառերից հետո լրացնել «(ներառյալ դեղերի եւ բժշկական նշանակության ապրանքների արտադրման ու ներմուծման)» բառերը,

2. «ժե)» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժզ» կետով.

«ժզ) բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից) փոխադրում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի՝ համաձայն զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների հետ կնքվող եռակողմ պայմանագրերի:»

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1. 1-ին եւ 2-րդ մասերում «արդարադատության» բառից հետո լրացնել «առողջապահության» բառը,

2. 2-րդ մասը «ե)» կետից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ե1» կետով.

«ե1) ռազմական դրության պայմաններում բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման ապահովում, բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպություններին ~~Հայաստանի Հանրապետության վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում~~ բնակչության բնական կենսագործունեության ապահովման համար լրացուցիչ ուժերի եւ միջոցների ծավալման վերաբերյալ առաջադրանքների տրամադրում:»:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ կետով.

«15) սահմանում է ռազմական դրության ժամանակ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (անկախ սեփականության ձևից)

առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարման լիազորությունները:»:

Հոդված 3.4. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2.Ռազմական դրությամբ պայմանավորված բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների առողջապահության բնագավառի կառավարման լիազորություններն անցնում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին՝ անկախ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող կազմակերպությունների սեփականության ձեւից, բացառությամբ պաշտպանության նախարարության զինվորական հոսպիտալների:>>: ~~Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կառավարման առանձնահատկությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի եւ տվյալ կազմակերպության միջեւ կնքվող՝ զորահավաքային առաջադրանքների վերաբերյալ պայմանագրերով եւ ապահովում են պաշտպանության շահերից բխող խնդիրների առաջնահերթ իրականացումը:~~ »:

Հոդված 4.5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: